

ՓԻՐՄԻԼԻԱՆՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»
ՈՐՊԵՍ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՂԲՅՈՒՐ

Ա. Ա. ԹՈՓՉՅԱՆ

Իր «Պատմութեան» II գրքի 75-րդ գլխում Մովսես Խորենացին հիշատակում է III դարի եկեղեցական նշանավոր գործիչ, Կապադովկյան Կեսարիայի եպիսկոպոս Փիրմիլիանոսին: Ըստ Խորենացու, նա աչակերտել է Օրիգենեսին, գրել բազմաթիվ երկեր, որոնցից մեկն է եկեղեցու հալածանքների պատմությունը. այդ հալածանքները նախ տեղի են ունեցել Մաքսիմիանոս (կարգա՝ Մաքսիմիանոս) (235–238 թթ.) և Դեկոս (կարգա՝ Դեկիոս) (249–251 թթ.), իսկ վերջում՝ Դիոկլետիանոս (284–305 թթ.) կայսրերի օրոք: Զուգահեռաբար նա անդրադարձել է նաև թագավորների գործերին: Իր գրվածքում Փիրմիլիանոսն ասում է, թե ալեքսանդրացիների 16-րդ եպիսկոպոս դարձավ Պետրոսը, որ նահատակվեց (Դիոկլետիանոսի – Ա. Թ.) հալածանքների 9-րդ տարում (311 թ.): Նա գրում է նաև Հայաստանում, Խոսրով թագավորի ժամանակ և հետո, ուրիշների ձեռքով բազմաթիվ նահատակվածների մասին, բայց քանի որ հավաստի ու «ոճով» չի պատմում, անունները և նահատակությունների տեղերը չի նշում, կարևոր է նրա պատմածը կրկնել: Սակայն Խորենացին ստույգ է համարում Փիրմիլիանոսի տեղեկությունները «անիշխանություն» շրջանի (Խոսրովի մահից հետո մինչև Տրդատի գահակալությունը) մասին, ուստի խոստանում է դրանք համառոտ երկրորդել:

Մեջբերենք պատմիչի խոսքերը. «Փերմելիանոս եպիսկոպոս Կեսարու Կապադովկացուց էր այր սքանչելի յուսումնասիրութեան, որ և ի տղայութեան իւրում առ Որոգինես երթեալ վարժեցաւ: Սա բազում խօսս արար, յորոց մի է պատմութիւն հալածանաց եկեղեցւոյ, որ յառաջ յաւուրս Մաքսիմիանոսի և Դեկոսի յարեաւ և որ հուսկ յետոյ յամս Դիոկլետիանոսի, շաբայարեալ ի նա և զգործս թագաւորացն: Յորում ասէ՝ վեշտասաներորդ եպիսկոպոս կացեալ Աղեքսանդրացուց Պետրոս, վկայեալ յիններորդ ամի հալածանացն: Դրէ զբազումս վկայեալս և ի Խոսրովայ, ի մերում աշխարհիս, համայն և յետ նորա օտարք յօտարաց: Բայց զի ոչ ճշմարտութեամբ և ոճով պատմէ, և ոչ զանուանսն նշանակէ կամ զտեղիս կատարմանցն՝ ոչ ինչ կարևորագոյն համարեցաք երկրորդել... Իսկ որ ինչ զկնի մահուանն

Խորենացու մինչև ցլթագաւորութիւնն Տրդատայ ի ժամանակս անիշխանութեանն պատմէ՝ ստոյգ համարելով երկրորդեմք քեզ համառօտ ըանիւք»¹:

Փիրմիլիանոսի և նրա «Պատմության» այս հիշատակումը Խորենացու երկի անհասկանալի, հանելուկային հատվածներից է և առաջացրել է Հայագետների տարակուսանքը: 231 թ. Օրիգենեսին աշակերտած, արգեն եպիսկոպոս դարձած Փիրմիլիանոսը չէր կարող գրել Դիոկլետիանոսի Հալածանքների և 311 թ. Պետրոս Ալեքսանդրացու նահատակության մասին, Կեսարիայի եպիսկոպոսին Խորենացու վերագրած պատմական երկասիրության հետք անգամ չի գտնվել, իսկ նրան վերաբերող ավյալները Մովսեսը բառացիորեն վերցրել է Եվսեբիոսի «Եկեղեցու պատմությունից»²: Հետևաբար Խորենացու ձեռքին Փիրմիլիանոսի ոչ մի պատմություն չի եղել: 75–79-րդ դուխների տեղեկությունները, որոնք նա վերագրում է Փիրմիլիանոսին, իրականում վերցված են ուրիշ աղբյուրներից. Ագաթանգեղոս, Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրություն» և «ինչ-որ ուրիշ» ժամանակագրություն, որ հիշեցնում է Մալալասին և «Զատկական ժամանակագրությունը»: Կեսարիայի եպիսկոպոսի մասին Մովսեսը գիտե միայն Եվսեբիոսի «Եկեղեցու պատմությունից», որտեղից քաղել է նաև Պետրոս Ալեքսանդրացուն վերաբերող տեղեկությունը³: Հայագետները կոնկրետ նշում են Փիրմիլիանոսի մահվան թվականը՝ 268/9: Իսկ «Հալածանքների պատմությունը», ըստ Ռ. Թոմսոնի, ոչ այլ ինչ է, քան Մովսեսի երևակայության արդյունք, նրա «Հայտնագործություններից» մեկը⁴:

Գ. Սարգսյանը փորձում է Պետրոս Ալեքսանդրացու մասին Խորենացու հիշատակությունը հասկանալ այլ կերպ. պատմիչը Փիրմիլիանոսից վերցրել է միայն «վեշտասաներորդ եպիսկոպոս կացեալ Աղեքսանդրացոց Պետրոս» հատվածը, որին ապա ավելացրել «վկայեալ յիններորդ ամի Հալածանացն»⁵: Դիտողությունը հետաքրքիր է այն առումով, որ Խորենացու տեղեկությունն իսկապես ճիշտ կլինի բաժանել երկու մասի, որովհետև հիմնված է երկու աղբյուրների վրա. Եվսեբիոսի «Եկեղեցու պատմության» (նահատակության թվականը) և անհայտ մի դրվածքի (Պետրոսի՝ 16-րդը լինելու տվյալը):

1 Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» այս և մյուս մեջբերումներն արված են ըստ հետևյալ հրատարակության. Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց, քննական ընագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի (նմանահանութիւն), լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երևան, 1991:

2 Տե՛ս A. v. G u t s c h m i d. Kleine Schriften. Bd. III, Leipzig, 1892, S. 302–303:

3 Г. Х а л а т я н ц. Армянские Аршакиды в “Истории Армении” Моисея Хоренского. Ч. 1, М., 1903, с. 125–127:

4 Տե՛ս Moses Khorenats' i. History of the Armenians. Translation and Commentary on the Literary Sources by R. W. Thomson, Cambridge (Mass.), London, 1978, p. 35:

5 М о в с е с Х о р е н а ц и. История Армении. Перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Ереван, 1990, с. 251:

Բայց Փիրմիլիանոսը չէր կարող դրել նաև Պետրոսի եպիսկոպոսու-
թյան մասին, քանի որ վերջինս Ալեքսանդրիայի պատրիարք է գարձել
300թ. ամռանը⁶, նրա մահվանից մոտ 32 տարի անց:

Եղել են նաև ուրիշ ենթադրություններ: Մովսեսը Փիրմիլիանոսին
հիշատակում է, որովհետև նրան անհրաժեշտ էր իր շարագրանքի համար
նշել եկեղեցական մի աղբյուր. իրականում նա հավանաբար օգտագործել է
բյուզանդական ժամանակագիր Դոմնինոսի տեղեկությունները: «Հայոց
պատմութեան» վերոհիշյալ գլուխներում կամ գործ ունենք մի տեսակ
«մոնտաժի» հետ (այսինքն՝ տարբեր աղբյուրների տվյալների՝ Փիրմիլի-
անոսի անվան տակ համակցման – Ա. Թ.), որով Մովսեսը նպատակ է ունե-
ցել ցույց տալու, թե իր ձեռքի տակ կան Ագաթանգեղոսի մոտ բացակայող
որոշ ստույգ տեղեկություններ, կամ էլ այդ հավանությունների պատմու-
թյունն ուրիշ հեղինակի գործ է եղել, և խորենացին այն Փիրմիլիանոսին է
վերագրել սխալմամբ⁸: Այս կարծիքների ելակետը դարձյալ այն է, որ
պատմիչը ձեռքի տակ չի ունեցել Կեսարիայի եպիսկոպոսի ոչ մի գրվածք:

Փորձենք հարցին նայել հակառակ տեսանկյունից, այսինքն՝ որ խո-
րենացին իրոք օգտվել է Փիրմիլիանոսի որևէ երկից: Մեղ հիմք պիտի ծա-
ռայեն հետևյալ հանգամանքները.

1. «Պատմություն» բառը պարտադիր չէ հասկանալ որպես «պատմա-
կան երկասիրություն» և եզրակացնել, թե խորենացին Փիրմիլիանոսին վե-
րագրում է պատմագրական ծավալուն մի երկ: Այդ բառը նա դործածում է
տարբեր իմաստներով, օրինակ՝ որպես «հիշատակված առանձին իրադար-
ձություն» կամ «տեղեկություն որևէ գեպքի վերաբերյալ»: Այսպես, II
գրքի 60-րդ գլխում խորենացին ասում է, թե Արիստոն Պելլացին դեղեցիկ
է պատմում Արտաշեսի մահվան մասին («Գեղեցիկ իմն պատմէ և Արիստոն
Փեղղացի յաղազս մահուանն Արտաշիսի»): Նա նկատի ունի Արտաշեսի
թաղման նկարագրությունը, որն սկսում է այսպես. «Եւ (Արիստոն – Ա. Թ.)
գրէ, եթէ որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի...»: Այդ
թաղման գրվազը խորենացու համար արգեն մի պատմութիւն է, քանի որ
գրանից առաջ նա Արիստոնի մասին ասում է՝ «այս այր, որ զայս պատմու-
թիւն ետ մեզ»: Կամ II գրքի 92-րդ գլխի վերջում պատմիչը Տրդատ Մեծի
թունավորման առիթով իր հաղորդումը կրկնում է այսպես. «Այլ պատմու-
թիւն յաղազս սրբոյն Տրդատայ ճշմարիտ է. քանզի արրուցեալ նմա դեղ
մահուլ՝ զրկեցան ի լուսոյ շնորհաց ճառագայթից նորա...»: Այսինքն՝ այդ
սպանութեան վերաբերյալ տեղեկությունը նույնպես պատմութիւն է:

6 S b' u O. B a r d e n h e w e r. Geschichte der altkirchlichen Literatur. Darmstadt, 1962, p. 239:

7 G. T r a i n a. Il complesso di Trimalcione (Movses Xorenac'i e le origini del pensiero storico armeno). Venezia, 1991, p. 58:

8 M o i s e d e K h o r è n e. Histoire de l'Arménie. Nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé, Paris, 1993, p. 45:

Ուշագրավ է, որ II գրքի գլուխների ցանկում այն պարունակող ընդ որ ձեռագրերում 75-րդ գլխի վերնագիրը հետևյալ կերպ է. «Յաղագս Փերմիլիանոսի եպիսկոպոսի Կեսարու Կապագովկացոց և պատմութեանց նորին»: Բառի հոգնակի թիվը վերնագրում կրկնվում է նաև ըուն գլխից առաջ, ձեռագրերի երկու հիմնական խմբերից մեկում (քննական հրատարակություն Տ խումբը)⁹: Պետք է ենթադրել, որ հոգնակին նախնական տարբերակն է, և հետագա որոշ ձեռագրերում գրիչներն այն եղակի են գարձրել՝ համապատասխանեցնելով հաջորդող «պատմութիւն հալածանաց եկեղեցոյ» արտահայտությունը: Հակառակ ենթադրությունը, թե եզակին է հետագայում դարձել հոգնակի, պակաս հավանական է, քանի որ գլխի բովանդակությունը գրիչներին նման փոփոխություն համար հիմք չպիտի տար: Եթե այդպես է, ուրեմն վերնագիրն արգեն հուշում է, որ պատմիչն ի նկատի ունի ոչ թե «պատմական երկասիրություն», այլ «տեղեկություններ եկեղեցու հալածանքների մասին»: Իսկ այդպիսի տեղեկություններ կարող էին լինել նաև ոչ պատմական բովանդակությամբ գրվածքում, ասենք՝ Փիրմիլիանոսի որևէ թղթում կամ ճառում: Եթե անգամ ճիշտ տարբերակը եզակին է, ապա գարձյալ այն ավելի շուտ ունի նշված իմաստը (հմտ. հունարեն *ιστορία* - ի հետ, որ նշանակում է նաև «տվյալներ», «տեղեկություններ». օրինակ՝ Հերոդոտոսի մոտ (II, 99). *ὄψις ἐμῆ καὶ γνῶμη καὶ ἱστορία* - իմ տեսածը և կարծիքը և [հավաքած] տվյալները):

Ինքը՝ Խորենացին այդ «պատմութիւն»-ը համարում է սոսկ Կեսարիայի եպիսկոպոսի «խօսք»-երից մեկը. «բազում խօսս արար, յորոց մի է պատմութիւն հալածանաց եկեղեցոյ»: «Նոր հայկազյան բառագրքում» (ՆՀԲ) «խօսք» բառի այս իմաստը բացատրվում է որպես «բան գրաւոր, ճառ, շարադրութիւն, պատմութիւն», և վերջինն անշուշտ չի նշանակում «պատմական երկասիրություն»: «Պատմութիւն»-ը բացատրված է նաև որպես «ճառ», իսկ «ճառը»՝ «պատմութիւն»: Այսինքն, փաստորեն, միջնադարյան ավանդույթում «խոսքը», «ճառն» ու «պատմությունը» (ոչ «պատմական երկասիրություն» նշանակությամբ), իբրև տարբեր հասկացություններ կամ գրական տերմիններ, կարող էին և իրարից հստակ չսահմանազատվել: Սա երևում է նաև նույն բառարանում այդ բառերի դիմաց բերված հունարեն ու լատիներեն համարժեքներից. «խօսքի» - *λόγος, ὁμιλία, sermo* և «պատմություն» *ιστορία, historia* համարժեքները բերված են նաև «ճառի» դիմաց:

Վերջապես այս առումով հետաքրքիր է Խորենացու «Պատմության» I գրքի 32-րդ գլխում Հոմերոսի հիշատակումը, երբ Մովսեսն Իլիական պատերազմի մասին նրա պատմություններն անվանում է «ճառք». «Եւ ո՞յք արդեօք այսպիսեաց ճառից առաջինք, եթէ ոչ որք ի Հոմերոսէ պատմին»:

9 Տե՛ս Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ց ի. նշվ. հրատ., էջ 213:

այն, որ վասն եղիականին պատմի պատերազմին»¹⁰: Այսպիսով, հարկ չկա եզրակացնելու, թե նա Կեսարիայի եպիսկոպոսին համարում է նաև պատմագիր:

2. Փիրմիլիանոսին և Պետրոս Ալեքսանդրացուն վերաբերող խորհրդանշանը ոչ բոլոր տեղեկություններն են վերցված Եվսեբիոսի «Եկեղեցու պատմությունից»: Այդ գրքի համապատասխան հատվածները հետևյալներն են. «Սքանչելի էր յոյժ յայնմ ժամանակի Պերմեղեղիոս (կարգա՝ Փիրմիլիանոս – Ա. Թ.) եպիսկոպոս եկեղեցւոյն Կեսարու Կապադովկացոց, զի այսպիսի փոյթ պնդութեան յանձին ունեւր վասն Իրիգենեսի (կարգա՝ Օրիգենեսի – Ա. Թ.). զի երբեմն յաշխարհն իւր՝ ուր ինքն, յղեաց և կոչեաց զնա, երթալ իբրև յօգուտ և ի շահ եկեղեցեաց: Ի ժամանակի իբրև եկն նա յերկիրն հրեաստան՝ ժամանակս բազումս եղև առ նոսա...» (VI, 27). «...Իսկ յետ պաշտելոյն Թէոնեսեայ զինն և տասն ամ, կալաւ յետ նորա զեպիսկոպոսութիւնն Աղեքսանդրացոց Պետրոս, որ փառաւորեցաւ նա առաւելապէս զերկոտասան ամ յեպիսկոպոսութեան անդ... Արդ յամից ինքերորդի հալածանացն հատաւ զլուխ նորա և զարգարեցաւ պսակեալ վկայութեամբ...» (VII, 32):

Եվսեբիոսը ոչինչ չի ասում այն մասին, որ Փիրմիլիանոսը երկերի հեղինակ էր, մինչդեռ խորհրդանշանը այդ տեղեկությունը («խօսս արար») ստույգ է և հաստատվում է Բարսեղ Կեսարացու մի վկայությունով¹¹: Վերջինս, Ս. Հոգու մասին իր ուսմունքը շարադրելիս, վկայակոչում է Փիրմիլիանոսի «թողած գրվածքները» (*οἱ λόγοι οὗς καταλείπει*) (*De Spiritu Sancto*, c. 29. 74): Ընդ որում խորհրդանշանը բառը «խօսս», Բարսեղ Կեսարացու *λόγοι* – ի ճշգրիտ թարգմանությունն է: Եվսեբիոսն ուղղակիորեն չի նշում նաև, թե Պետրոսն Ալեքսանդրիայի 16-րդ եպիսկոպոսն էր, մինչդեռ սա հավաստի տվյալ է¹², որը խորհրդանշանն նույնությամբ արտագրել է ուրիշ գրվածքից:

3. «Հայոց պատմության» դիտարկվող հատվածում գործ ունենք աղբյուրներից օգտվելու խորհրդանշանը հատուկ մի եղանակի հետ: Նա որոշակի ժամանակաշրջանի համար նշում է որևէ գլխավոր աղբյուր: Կարող է տպավորություն ստեղծվել, թե այնուհետև պատմիչն իրեն անհրաժեշտ հիմնական նյութը կամ, առնվազն, ընդարձակ տեղեկություններ պիտի քաղի այդ աղբյուրից: Դեռ 1891 թ. Գ. Տեր-Մկրտչյանը, մանրամասնորեն ուսումնասիրելով խորհրդանշանը կողմից Մարաբասյան մատյանի օգտագործման ծավալը, հանգեց հետաքրքիր եզրակացություն. այդ ծավալն իրականում շատ ավելի փոքր է, քան կարծում են հարցին անդրադարձած բոլոր

10 «Ճան» բառի «պատմություն» իմաստով կիրառությունը խորհրդանշանում հանդիպում է նաև այլուր (օրինակ՝ II, 15, 59):

11 Հմմտ. Հ. Գ ա թ ը ր 6 յ ա ն. Տիեզերական պատմութիւն. հ. Բ, Վիեննա, 1852, էջ 248:

12 Հմմտ. A. v. G u t s c h m i d. Kleine Schriften. Bd. II, Leipzig, 1890, p. 417, 425–426:

Հայագետները, գա ոչ թե I գրքի 8-րդ գլխից մինչև II գրքի 9-րդ գլխի միջև եղած ամբողջ Հատվածի հիմնական բովանդակությունն է, այլ ընդամենը «մի քանի երես ընդ», ավելին՝ «այդ մեծ Հատվածի ամենամեծ մասը Մարարասից չէ»¹³:

Մասնագետները տարակուսում են. Հավանակա՞ն է արգյոք, որ, օրինակ, Հուլիոս Աֆրիկանոսը Հայերի մասին հաղորդեր այնպիսի ծավալուն տվյալներ, ինչպիսիք, թվում է, նրան վերադրում է Մովսեսը. նրա «Ժամանակագրությունն» առհասարակ չէր կարող որևէ առնչություն ունենալ, ասենք, ղուտ Հայաստանի ներքին կյանքին վերաբերող զանազան տեղեկությունների հետ, որոնք առկա են Աֆրիկանոսի անվան հիշատակմանը հաջորդող գլուխներում: Նույն տեսանկյունից է գիտվում նաև Փիրմիլիանոսի «պատմությունը», ուստի, ըստ գերիշխող կարծիքի, իր նշած այս և նման ուրիշ աղբյուրներից Խորենացին իրականում չի օգտվել, իսկ դրանց հեղինակների անունները նրան ծանոթ են Եվսեբիոսի միջոցով:

Հարկավոր է, սակայն, հաշվի առնել հետևյալը: Խորենացուն, անշուշտ, անհրաժեշտ են եղել հեղինակությունների անուններ, որպեսզի իր տեղեկություններն ավելի արժանահավատ երևան. բայց պնդել, թե նրանց դրվածքները նա ամենևին չի օգտագործել, կնշանակի առաջ բերել նոր հարցեր: Որտեղի՞ց է այդ գեպքում Խորենացին վերցրել միջազգային սլատմությունը վերաբերող այնպիսի հավաստի տեղեկություններ, որոնք ակներևորեն հունա-հռոմեական ծագում ունեն, և որոնց աղբյուրը բանասիրությունը չի պարզել: Մասնավորապես, այժմ մեր խնդրո առարկան են Փիրմիլիանոսի վկայակոչումից հետո հիշատակվող մի քանի իրադարձություններ (դրանց կանդրադառնանք ստորև): «Ինչ-որ ժամանակագրությունից», - դրում է Գ. Խալաթյանը¹⁴, բայց սա միայն ենթադրություն է:

Ինչու՞ պետք է պատմիչը որևէ աղբյուրի տվյալներ վերագրեր մեկ այլ աղբյուրի: Եթե անտիկ շրջանի ինչ-որ երկեր պահպանվել և հասել էին Խորենացուն, ուրեմն դրանք բոլորն էլ հեղինակությունների դրվածքներ էին (առավել ևս՝ եթե թարգմանված էին Հայերեն): Ի՞նչը պետք է դրդեր մի հեղինակության անունը զանց առնել և նրա փոխարեն աղբյուրի հեղինակ կոչել մեկ ուրիշին: Վերջապես հեղինակությունն այն չափանիշը չէ, որով Խորենացին միշտ առաջնորդվում է՝ աղբյուրներ վկայակոչելիս: Նա հիշում է բազմաթիվ անհայտ կամ քիչ հայտնի հեղինակների, որոնց տեղեկություններից օգտվել է (Պալեոփատոս, Փելեմոն, Պոլիկրատես, Եվադորաս, Սկամանդրոս, Փլեդոն, Արիստոն Պելլացի և ուրիշներ):

13 Գ. Տեր-Մկրտչյան. Խորենացու Պատմության ուսումնասիրություն. - Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Երևան, 1979, էջ 83, 108:

14 Г. Х а л а т я н ц, Указ. соч., с. 127:

Այլ առիթով փորձել ենք ցույց տալ, որ խորենացին Հուլիոս Աֆրիկանոսից, այնուամենայնիվ, որոշ տվյալներ վերցրել է¹⁵: Նույնպիսի տպավորություն ունենք նաև Հիմա. նրան որպես աղբյուր է ծառայել Փիրմիլիանոսի մի գրվածք: Պետք է, սակայն, ճշտել, թե ինչ չափով ի նկատի ունենալով աղբյուրների օգտագործման վերն ակնարկված մեթոդը: Հուսահատման կողմից խորենացին ընդհանուր քաղցած է միայն առանձին ստույգ տեղեկություններ, որոնք տվյալ աղբյուրում, հնարավոր է, նույնիսկ ուղղակի կապ չեն ունեցել Հայաստանի հետ: Այդ փաստերը նա գիտում է իրեն այլ ճանապարհներով հայտնի գարձած ուրիշ տվյալների կոնտեքստում՝ փորձելով գրանց օգնություններ վերականգնել Հայաստանի պատմությունը, ճշտել հայերի գերը միջազգային պատմական իրադարձություններում: Թե որքանով է դա նրան հաջողվում, հարցի մյուս կողմն է: Հստակ է միայն մի բան. սույն աղբյուրի հիշատակումը պետք է գիտվի այն մոտեցմամբ, որ խորենացին նրանից վերցրել է ոչ թե 75–79-րդ դարերի հիմնական նյութը, այլ ընդամենը չորս-հինգ տվյալ: Նա ինքը նշում է, թե որոնք են դրանք՝ այդ տեղեկությունները հաղորդելիս Փիրմիլիանոսի մասին գրելով. «ասէ», «գրէ», «նոյն այր ասէ», «պատմէ»: Եվ եթե անգամ նշած չլիներ, մեծ ջանքեր չէին պահանջվի, ստույգ ժամանակագրություն և բովանդակային հատկանիշների հիման վրա, դրանք առանձնացնելու համար: Այս հանգամանքը նկատի առնելու դեպքում տարակուսելու պատճառ ավելի քիչ կլինի:

4. Փիրմիլիանոսը, իբրև ժամանակակից, կարող էր դրել քրիստոնեական եկեղեցու հալածանքների մասին Մաքսիմինոս Թրակացի և Դեկիոս կայսրերի օրոք, և շատ հավանական է, որ գրած լինի: Ցավոք, այս մասին հնարավոր է սուսկ ենթադրություններ անել, քանի որ նրա երկերից պահպանվել է միայն մի թուղթ (256 թ.)՝ ուղղված Կիպրիանոսին (Cyprianus, *Epistolae*, 75), լատիներեն թարգմանություն: Այդուհանդերձ դժվար է պատկերացնել, թե Կապադոկյան Կեսարիայի եպիսկոպոս Փիրմիլիանոսը, որ ի պաշտոնե պետք է եղած լիներ հալածվողների առաջին շարքում, իր գրվածքներում չանդրադառնար ճակատագրական այդ իրադարձություններին: Ժամանակի ամենահայտնի եկեղեցական գործիչը՝ Օրիգենեսը, օրինակ, ինչպես վկայում է Եվսերիոսը (VI, 28), տարբեր առիթներով արձագանքել է Մաքսիմինոսի հարուցած հալածանքներին: Մեզ է հասել նրա գրվածքը՝ նվիրված 235 թ. նահատակվածներին, "Exhortatio ad Martyrium" վերնագրով:

5. Բոլոր այն տեղեկությունները, որոնք խորենացին ասում է, թե վերցրել է Փիրմիլիանոսի «Պատմությունից», բացառությամբ մեկի (Պետրոս Ալեքսանդրացու հիշատակման), ժամանակագրական առումով կարող

15 Ա. Թ ո փ չ յ ա ն. Հուլիոս Աֆրիկանոսի «ժամանակագրությունը» և Մովսես խորենացին. — «Բանբեր Մատենադարանի», 1998, N 17 (տպագրության ընթացքում):

էին լինել այդ աղբյուրում: Թվարկենք գրանք՝ նշելով գլուխները և ստույգ թվականները:

II, 75. Անտոնինոս Կարակալլա կայսրը Միջագետքում պատերազմում է պարթևների դեմ և սպանվում Եդեսիա ու Խառան քաղաքների միջև (217 թ.), Հայաստանի թագավորն այդ ժամանակ չեզոք գիրք էր գրավել («... գԱնտոնինէ որդւոյ Սևերեայ Ասէ՛ պատերազմեալ ընդ Վաղարշայ Պարսից արքայի ի Միջագետս, և մեռանել ի մէջ Եգեսիայ և Խառանու, և մերոյն Խոսրովու ոչ յոք հակամիտեալ»):

II, 75. Եկեղեցու հալածանքների ժամանակ բազմաթիվ նահատակներ են եղել նաև Հայաստանում, Խոսրով թագավորի օրոք, բայց Փիրմիլիանոսն այդ մասին ճշգրիտ չի պատմում, զոհերի անուններն ու նահատակություն տեղերը չի նշում, ուստի կարևոր չէ նրա պատմածը կրկնել («Գրէ զբազումս վկայեալս և ի Խոսրովայ, ի մերում աշխարհիս... Բայց զի ոչ ճշմարտութեամբ և ոճով պատմէ, և ոչ ղանուանսն նշանակէ կամ զտեղիս կատարմանցն՝ ոչ ինչ կարևորագոյն համարեցաք երկրորդել»): Այսինքն՝ Խորենացու աղբյուրում եղել է պարզապես ընդհանուր մի հիշատակություն Հայաստանում նահատակվածների մասին, առանց կոնկրետ տվյալների ու մանրամասների:

Այս Խոսրովը, համաձայն «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական բազմահատոր հրատարակության, օտար աղբյուրների Տրգատն է (Տրգատ II-ը, որ թագավորել է 216–256 թթ.): «Խոսրով» ոչ միայն անձնանուն է, այլև տիտղոս, որ կրել են տարբեր թագավորներ¹⁶: Կան նաև ուրիշ կարծիքներ. ըստ վերջին տեսակետներից մեկի՝ Տրգատ II-ը գահակալել է մինչև 252/3 թ., երբ պարսիկները Հայաստանը նվաճեցին, և նա ստիպված էր փախչել Հռոմ (ինչպես հաղորդում է XII դ. բյուզանդացի մատենագիր Զոնարասը): Այնուհետև թագավորել է Տրգատ III Մեծի հայրը, որ ոչ թե Տրգատ II-ն էր, այլ Խոսրով II-ը. նա դավադրաբար սպանվել է ոչ թե 256, այլ 257/8 թ.: Այսինքն՝ Աղաթանգեղոսն ու Խորենացին «Խոսրովին» վերագրում են երկու թագավորի (Տրգատ II և Խոսրով II) գործունեություն¹⁷: Այս տեսակետը լավ փաստարկված և համոզիչ է թվում: Մեզ համար տվյալ դեպքում կարևորն այն է, որ, ըստ ճշտված ժամանակագրություն, «Խոսրովը» սպանվել է Փիրմիլիանոսի մահվանից շատ առաջ:

II, 75. Խորենացին խոստանում է իր աղբյուրի օգնությամբ հակիրճ պատմել «անիշխանություն» շրջանի մասին, որ հաջորդում է Խոսրովի սպանությունը: («Իսկ որ ինչ զկնի մահուանն Խոսրովայ... պատմէ՛ ստոյգ համարելով երկրորդեմք քեզ համառոտ բանիւք»): Փիրմիլիանոսը կարող

16 Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), հ. II, Երևան, 1984, էջ 22, 25, 27:

17 Ա. Մարտիրոսյան. Հայաստանը և առաջին Սասանյանները. «Պատմաբանասիրական հանդես», 1975, N 3, էջ 149–153, 171:

էր անդրադառնալ 268/9 թ. նախորդող դեպքերին, և 76–79-րդ գլուխների երկու տեղեկությունները, որոնք խորենացին ուղղակիորեն վերագրում է նրան, վերաբերում են հենց այդ ժամանակահատվածին: Ուրիշ ոչ մի տվյալի մասին սլատմիչը չի ասում, թե վերցրել է Փիրմիլիանոսից, և հիշյալ գլուխների ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հենց այդ երկու տեղեկություններն էլ պետք է սահմանափակվել:

II, 76. Խոսրովի սպանությունից հետո հայ նախարարները միաբանվելով օգնություն են խնդրում Փռուղիայում գտնվող հռոմեական զորքերից, պարսիկներին դիմագրավելու և Հայաստանը պաշտպանելու համար, լուրը հայտնվում է Վալերիանոս (253–259 թթ.) կայսերը: Բայց քանի որ գոթերը, Դանուբ գետն անցնելով, գավառներ էին գերեվարում և Կիլիկիայի կղզիները կողոպտում, Վալերիանոսն ստիպված է նրանց դեմ դուրս գալ ու չի կարողանում հայերին օգնել: Նրա կյանքն էլ կարճ է տևում, և «Թագավորությունն առնում է» Կլավդիոսը («Նոյն ալր աւէ, եթէ յետ սուսերահարն լինելոյ Խոսրովու, միաբանեալ նախարարք Հայոց՝ ածեն իւրեանց յօղնականութիւն զգօրս Յունաց որ ի Փռիւգիայ՝ Պարսից ընդդիմանալ և պահել զաշխարհս: Եւ իսկոյն ազդեցին Վաղերիանոսի կայսեր: Բայց վասն զի Դունուբ անցեալ ընդ Դանուբ գետ զբազում գաւառս դերի վարեցին, և զԿիլիկիայ կղզիս աւար առին՝ վասն որոյ ոչ ժամանէ մերոյ աշխարհիս թեւարկել Վաղերիանոս. նա և ոչ յերկարէ զկեանսն, առնով ի նմանէ զԹագաւորութիւնն Կլավդիոս...»):

Վալերիանոսին հաջորդած կայսրերի անունները, սկսած Կլավդիոսից (Կլավդիոս (268–270 թթ.), Ավրելիանոս (270–275 թթ.) և այլն), ինչպես նաև նրանց կարճատև իշխանությունից մասին տվյալները խորենացին վերցրել է Եվսեբիոսի «Ժամանակագրությունից»¹⁸: Այնուհետև ոչ այս գլխի շարունակություն մեջ, ոչ էլ հաջորդ երկու գլուխներում (77, 78) ոչինչ ենթադրել չի տալիս, թե պատմիչն իր նշած աղբյուրից էլի ինչ-որ բան է քաղել: Իրանցից առաջինի բովանդակությունը հիմնականում վերաբերում է Հայաստանի ներքին կյանքին, իսկ երկրորդի նյութը Խոսրովի սպանությունից հետո մանուկ Տրդատին (III-ին) Հռոմի արքունիք փախցրած Արտավազդ Մանգակունու տոհմի կոտորվելն է և մի գեղեցկադեմ աղջկա փրկությունը:

II, 79. Այս գլխի սկզբում խորենացին վերջին անգամ հիշում է Կեսարիայի եպիսկոպոսին, որը պատմում է Հայաստանից դուրս եղած ժամանակ Տրդատի քաջագործությունների մասին. նա մանկուց սիրում էր ձի հեծնել, խիզախորեն ձիավարում էր և հաջողակ էր զինաշարժություն մեջ, սովորել էր ռազմական դործը: Հետո իր մեծ ուժով ու զարմանալի կարողություններով աչքի ընկավ մրցություններում, կրկեսում («Պատմէ զնահատակութեանցն Տրդատայ, նախ ի մանկութեանն յերիվար կամակար աշտանա-

18 Տե՛ս Գ. Խ ա ա տ յ ա ՚ Մ ա ձ. սօ., ս. 128–129:

կեալ, և կորովի ձիավարեալ, և զէնս շարժեալ յաջողակաբար, և այլ պատե-
րազմականս ուսանել ախորժակս. ապա... ի մրցանակս ագոնին առաւելեալ
քան զԿղիտոստրադոս հռոգացի, որ զվզէ ե.եթ. կալեալ յաղթէր. զարձեալ և
քան զԿերասոս արգիացի...»։ այնուհետև Խորենացին պատմում է, թե ինչ-
պես է Տրգատն այդ մարզիկներին գերազանցել)։

«Կամակար աշտանակեալ» արտահայտութիւնը վերցված է Կեղծ-
Կալլիսթենեսի «Ալեքսանդրի պատմութեան» հայերեն թարգմանութիւննից
(«Կամակար ի ձի աշտանակէր»), իսկ օլիմպիական խաղերում հաղթած
հույների անունները՝ Եվսերիոսի «ժամանակագրութիւննից»¹⁹։ Այգպես
պատմիչը պարզապես ցանկացել է Տրգատի սխրանքների մասին հաղոր-
դումն ուրիշ աղբյուրների օգնութեամբ ավելի մանրամասն ու ոճավորված
ներկայացնել։ Այսօրինակ բանաբաղութեամբ իր բուն նյութը հարստացնե-
լու Խորենացու մեթոդն այլ առիթներով վաղուց ուսումնասիրված է, և եզ-
րակացութիւնը, իրավացիորեն, հետևյալն է. օժանդակ աղբյուրներից
նման բնույթի բառացի փոխառութիւնները սոսկ «ոճական հագուստ» են
ու չեն փոխում տեղեկութիւնների էությունը²⁰. ուստի բավարար հիմք չե-
ն՝ դրանց հավաստիութիւնը կամ հեղինակի նշած որևէ հիմնական աղբյու-
րի (տվյալ դեպքում՝ Փիրմիլիանոսի) գոյութիւնը կասկածի ենթարկելու
համար։

Քանի որ մանուկ Տրգատին Հռոմ են տարել նրա հոր սպանութիւննից
հետո, 256²¹, կամ, ամենաուշը, 261 թ.²², ուրեմն Կեսարիայի եպիսկոպոսը
կարող էր Հայաստանի ապագա թագավորի մանկութեան ու պատանեկու-
թեան տարիներին վերաբերող հիշատակութիւնն ունենալ։

6. Եվսերիոս Կեսարացին «Եկեղեցու պատմութեան» մեջ հաղորդում
է (VII, 30), որ, երբ Անտիոքում գումարվեց եպիսկոպոսների հերթական ժո-
ղովն ընդդեմ Պողոս Ամոսատացու, Ավրելիանոս կայսեր օրոք, Փիրմիլիա-
նոսը մինչ այդ արդեն մահացել էր Տարսոնում (հիշենք, որ Ավրելիանոսը
կայսր է դարձել 270 թ.)։ Հայտնի է, որ Խորենացին այս աղբյուրը դիտեր
բավական լավ ու մանրամասնորեն, ուստի զժվար թե հիշյալ տեղեկութիւ-
նը նրանից վրիպած լիներ։ Բացի այդ, նա ստույգ պատկերացում ունի
տվյալ ժամանակահատվածում Հռոմի կայսրերի հաջորդականութեան մա-
սին։ Նրանց իշխանութեան տարիները, հայ և պարսիկ թագավորների դա-
հակալութեան թվականների համեմատ, նա իհարկե ներկայացնում է ըստ
իր ժամանակագրական համակարգի, մերթ հավաստի, մերթ սխալ, բայց
կայսրերի անունների թվարկումը հերթականութեամբ ճիշտ է. Ավրելիանոս,

¹⁹ Նույն տեղում, էջ 141–142։

²⁰ Տե՛ս Գ. Մ ա Ր Գ ս յ ա ն. Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ. «Բանբեր Մատենադարանի», 1956, N 3, էջ 36–42։ Ն ու յ ն ի Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 223–224։

²¹ Տե՛ս ՀԺՊ, հ. II, էջ 44։

²² Տե՛ս Ա. Մ ա Ր տ ի Ր ո ս յ ա ն, նշվ. աշխ, էջ 153։

Տակիտոս, Ֆլորիանոս, Պրորոս, Կարոս (Կարինոսի և Նումերիանոսի Հետ), Դիոկլետիանոս (II, 76–79):

Չմոռանանք, որ մասնագետները «Եկեղեցու պատմությունը» համարում են Փիրմիլիանոսի մասին խորհրդանշական տեղեկությունների միակ աղբյուրը: Այդ գեպքում, նույն գրքից իմանալով, թե Կեսարիայի եպիսկոպոսն Ավրելիանոսի կայսր դառնալուց առաջ մահացած էր, պատմիչն ինչպե՞ս կարող էր, այն էլ միտումնավորապես, նրան վերագրել Դիոկլետիանոսի հարուցած հալածանքների պատմությունը:

Մեզ թվում է, որ «խօսս արար, յորոց մի է պատմութիւն հալածանաց եկեղեցւոյ, որ յառաջ յաւուրս Մաքսիմիանոսի և Դեկոսի յարեալ և որ հուսկ յետոյ յամս Դիոկղետիանոսի»՝ պետք է ընկալել ուրիշ կերպ: Խորհրդանշանակալի նկատի չունի, թե Փիրմիլիանոսի գրվածքն ընդգրկում էր բոլոր երեք կայսրերի օրոք ծավալված հալածանքների պատմությունը. նա միայն լրացուցիչ պարզաբանում է տալիս, որ այդպիսի հալածանքներ եղել են Մաքսիմիանոսի, Դեկոսի և, «ամենավերջում» («հուսկ յետոյ»), Դիոկլետիանոսի ժամանակ: Հիշենք, որ խորհրդանշական լեզուն երբեմն խրթին է, երկիմաստ, և նրան ճիշտ չհասկանալու դեպքում կարող են անտեղի քննադատական հետևություններ լինել: Օրինակ՝ II գրքի 2-րդ գլխում նա գրում է. «Եւ Արչակ տիրէ երրորդ մասին աշխարհիս, որպէս յիրականացն պատմութեանց Հերոդոտեայ է ուսանել ի չորրորդէն, որ յաղագս բաժանելոյ զբոլոր երկիրս յերիս մասունս, և կոչել զոմն Եւրոպէ, և զոմն Ասիա, որում և տիրեաց Արչակ» («Եվ Արչակը տիրում է աշխարհիս մի երրորդ մասին, ինչպես կարելի է սովորել Հերոդոտոսի իրական պատմության չորրորդ (գրքից), որտեղ աշխարհը բաժանված է երեք մասի, որոնք անվանում են՝ մեկը Եվրոպե, մեկը՝ Ասիա, որին և մյուսը՝ Ասիա, որին և տիրեց Արչակը»²³): Այս հատվածից կարելի է եզրակացնել, թե խորհրդանշանակալի վերագրումն Արչակի՝ աշխարհի երրորդ մասին տիրելու վերաբերյալ տեղեկությունը, մինչդեռ հստակ է, որ նա հույն պատմագրին վկայակոչում է, որպեսզի ընդամենը հաստատի, թե աշխարհը բաղկացած է երեք մասից²⁴:

7. Միակ խոչընդոտը, ընդունելու համար, որ խորհրդանշանակալի իբրև աղբյուր գործածել է Փիրմիլիանոսի մի գրվածք, մնում է Պետրոս Ալեքսանդրացու հիշատակությունը: Այն յուրօրինակ է, քանի որ, ինչպես նշվեց, պետք է բաժանվի երկու մասի. Ալեքսանդրիայի պատրիարքի նահատակության թվականը, որ պատմիչին հայտնի է Եվսեբիոսի «Եկեղեցու պատմությունից», և Պետրոսի՝ 16-րդը լինելու փաստը, որի աղբյուրն անհայտ է:

23 Մ ո վ ս ե ս խ ո ռ ե ն ա ց ի . Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 131:

24 Տե՛ս Դ. Ս ա ր ք ի ս յ ա . "История Армении" Мовсеса Хоренаци. Ереван, 1986, с. 34:

Մյուս տեղեկություններից, որոնք Խորենացին ուղղակիորեն վերագրում է Փիրմիլիանոսին, սա զատվում է նաև ուրիշ առանձնահատկություններով: Նախ, առաջին իրադարձության (Կարակալլայի արշավանքն ու մահը 217 թ.) և Պետրոսի եպիսկոպոս ձեռնադրվելու թվականների (300) միջև մեծ ընդմիջում կա, մոտ 84 տարի: Մյուս տեղեկությունները, ի տարբերություն այս մեկի, կարող էին լինել Փիրմիլիանոսի գրվածքում: Դրանք ժամանակային ու բովանդակային առումով միասնական են, փոխկապակցված, և հավանական է, որ նույն աղբյուրից վերցված լինեն: Հիշենք. Կարակալլայի պատերազմը պարթևների դեմ ու մահը, Տրդատ II-ի չեզոք դիրքն իր գահակալության սկզբում, քրիստոնյաների նահատակությունը Հայաստանում նրա օրոք, հնարավոր է՝ Մաքսիմինոս Թրակացու կամ Դեկիոսի հարուցած հալածանքների ժամանակ, Խոսրովի սպանությունը և հայ նախարարների դիմումը Վալերիանոս կայսերը, Տրդատ III-ի քաջագործությունները Հռոմում, նրա գահակալությունից առաջ: Մինչդեռ Պետրոս եպիսկոպոսի հիշատակությունն առնչություն չունի ոչ այդ թագավորների, ոչ տվյալ ժամանակահատվածի ու ոչ էլ, առհասարակ, Հայաստանի հետ: Սույն հանգամանքները կարծես հուշում են, որ այն ծագում է ուրիշ աղբյուրից և Փիրմիլիանոսին է վերագրված թյուրիմացաբար: Ի՞նչը կարող էր նման թյուրիմացության պատճառ լինել:

«Արարատ» պարբերականի 1894 թ. 1-ին համարում եղել է ակնարկ այն մասին, որ Խորենացին Փիրմիլիանոս եպիսկոպոսին շփոթել է ուրիշ հեղինակի՝ «Լանկտանցիոսի» հետ, որի լրիվ անունը «Փիրմիլիանոս Լանկտանցիոս» է²⁵: Անունն, իհարկե, պետք է ճշտել. խոսքը վաղ քրիստոնեական դրականության նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Լուկիոս Կելիոս (Կեկիլիոս) Փիրմիանոս Լակտանտիոսի (*Lucius Caelius (Caecilius) Firmianus Lactantius*) մասին է: Նա ծնվել է 250 թ. առաջ, Աֆրիկայում. մահվան հավանական թվական է համարվում 325-ը²⁶: Ակնարկի հեղինակը փաստարկներ չի բերել. նա միայն նպատակ ուներ մասնագետների ուշադրությունը հրավիրել այդ հնարավոր տարբերակի վրա: Նրա առաջարկն անարժանք մնաց, մինչդեռ կարող է հետաքրքիր հետևություն հանգեցնել:

Լակտանտիոսի գրական գործունեության հասուն շրջանը համընկել է Դիոկլետիանոսի, այնուհետև՝ Գալերիոսի (305–311 թթ.) ու Մաքսիմինոս Դայայի (309–313 թթ.) հալածանքների (սկիզբը՝ 303 թ.) և դրանց հաջորդող տարիների հետ: Նա իրադարձությունների ականատես էր և ավելին. իբրև քրիստոնյա, զրկվել է նիկոմեդիայում հռետորության ուսուցչի

25 Ե. Մ ա դ ա թ յ ա ն. Փիրմիլիանոսը Մովսես Խորենացու Պատմութեան մէջ. – «Արարատ», 1894, N 1, էջ 26–27:

26 *St'us Lactantius. De Mortibus Persecutorum*. Edited and Translated by J.L. Creed, Oxford, 1984, p. XXV, XXVII:

իր աշխատանքից: Այդ դեպքերի ծանր տպավորություններն ու արձագանքներն առկա են նրա տարրեր երկերում, իսկ մի հայտնի գրվածք՝ «Հալածողների մահվան մասին» (*De Mortibus Persecutorum*), քրիստոնյաների հալածանքներ հարուցած կայսրերի (Տիրերիոսից մինչև Մաքսիմիանոս Դայա) գործունեության և գաժան վախճանի նկարագիրն է:

Լակտանտիոսի պահպանված գործերում Պետրոս Ալեքսանդրացու մասին խոսք չկա, բայց այլ առիթով նա անշուշտ կարող էր այդ պատրիարքին հիշատակած լինել, մանավանդ որ աֆրիկացի էր և, ինչպես ենթադրվում է, 305 թվականից հետո դարձյալ գտնվում էր այնտեղ²⁷. նա պետք է որ ի մոտո տեղյակ լիներ Ալեքսանդրիայի իրադարձություններին: Հիերոնիմոսը (մոտ 342–420 թթ.) իր հայտնի «մատենագիտության» մեջ (*De Viris Illustribus*, 80) նշում է Լակտանտիոսի մի երկասիրություն՝ «Հալածանքների մասին» (*De Persecutione*) վերնագրով:

Ի դեպ, իտրենացու «Պատմության» մի ուրիշ հատված (II գրքի 83-րդ գլխում) ուշագրավ ընդհանրություն ունի 'De Mortibus'-ի հետ: Խոսքը «Իսաչի տեսիլքի» դրվագի մասին է, որ եղել է մասնագետների ուշադրության առարկա: Ենթադրվում էր, որ Մովսեսն այն վերցրել է «Սեղրեստրոսի վարքի» հայերեն թարգմանություն՝ VII դարի վերջում խմբագրված տարբերակից²⁸, կամ առկա երկու տարբերակներից էլ²⁹: Ֆ. Կոնիբերը հակադրվեց այս կարծիքին և ապացուցեց, որ նա օգտվել է առավել վաղ շրջանի տեքստից³⁰: Անգլիացի գիտնականի հիմնական կռիվներից մեկը իտրենացու «սիւզնոյն» (լատիններեն՝ *signum*) բառն էր, որ չկա «Վարքի» եղած ո՛չ հունարեն, ո՛չ հայերեն տարբերակներում: Լակտանտիոսի հիշատակությունն այդ դրվագի մասին ամենահինն է³¹, և *signum* բառն այդ տեսիլքի կապակցությամբ առաջին անգամ հանգիստում է նրա մոտ (44, 5-6):

Միանգամայն հնարավոր պիտի համարել, որ իտրենացին շփոթել է «Փիրմիլիանոս» (*Firmilianus*) և «Փիրմիանոս» (*Firmianus*) անունները: Պատմիչը տվյալ գեպքում հայտնում էր մի տեղեկություն («վեշտասաներորդ եպիսկոպոս կացեալ Աղեքսանդրացոց Պետրոս»), որ Հայաստանի պատմության առնչությամբ որևէ կարևորություն չունեն, և նա անհրաժեշտ չէր համարի անպայման ճշտել դրա հեղինակի անունը:

Պատկերացնենք այսպես. իտրենացու ձեռքի տակ եղել է հայերեն թարգմանված մի ժողովածու, որ ընդգրկել է այդ երկու հեղինակների՝ ի-

27 T. D. Barnes. Constantine and Eusebius. Harvard, 1981, p. 291:

28 A. Carrière. Nouvelles sources de Moïse de Khoren. Vienne, 1893, p. 18–19:

29 Х а л а т я н ц. Указ. соч., с. 164–167.

30 F. Conybeare. The Date of Moses of Khoren.— Byzantinische Zeitschrift, 3–4, Munich, 1901, p. 492–493:

31 M. v. Esbroek. Legends about Constantine in Armenian.— Classical Armenian Culture, Edited by Thomas J. Samuelian, University of Pennsylvania, 1982, p. 80: L a c t a n t i u s. Op. cit., p. 119:

րար անմիջապես հաջորդող դրվածքներ (թեկուզ գրանց առանձին հատվածներ, տեղեկություններ) հալածանքների վերաբերյալ կամ մի երրորդ հեղինակի երկ՝ Փիրմիլիանոսից և Լակտանտիոսից մեջբերումներով: Նման աղբյուրներ նա ուրիշ դեպքերում, օրինակ՝ II գրքի 13-րդ գլխում, Արտաշես թագավորի մասին հույն հեղինակներից մեջբերումներ անելիս, անկասկած օգտագործել է: Հայերեն թարգմանություններում անունների աղավաղումը սովորական երևույթ էր. Եվսեբիոսի «Եկեղեցու պատմության» թարգմանության մեջ Փիրմիլիանոսի անունը մի քանի ձևով է, և ոչ մի տարբերակ ճշգրիտ չէ. Պերմեղիանոս, Պարմեղիանոս, Պերմեղեղիոս, Պերմեղեղիանոս: Ենթադրյալ աղբյուրում երկու հեղինակների անունները կարող էին աղավաղված ու իրար նման լինել, և միմյանց անմիջապես հաջորդող տեղեկությունները մեջբերելիս Խորենացին կարող էր սխալվել:

Անհրաժեշտ է ավելացնել, որ աֆրիկացի հեղինակի «Փիրմիանոս» և «Լակտանտիոս» անունները հավասար գործածություն ունեին, նույնիսկ առաջինը կարող էր օգտագործվել առանց երկրորդի: Հիերոնիմոսը (ն. տ.) նրա մասին գրում է. «Փիրմիանոսը, որ նաև Լակտանտիոս [է կոչվում]» ("Firmianus qui et Lactantius"): Աֆրիկայում հայտնաբերված մի արձանագրության մեջ նա հիշատակվում է որպես Լուկիոս Կեկելիոս Փիրմիանոս³²:

Լակտանտիոսն իբրև հեղինակ մեզ համար ուրիշ առումով էլ հետաքրքիր է: Նա աստվածաբան էր, հիմնականում գրել է փիլիսոփայական դործեր, բայց գրանց կողքին մեզ է հասել «De Mortibus Persecutorum» ինքնատիպ պատմագրական գրվածքը, ոճով ու բնույթով նրա մյուս երկերից բավական տարբեր: Այս օրինակի հիման վրա կարելի է ավելի որոշակիորեն պատկերացնել, որ Փիրմիլիանոսն անգրագարձել է նաև պատմական իրադարձությունների:

Թերևս հարց ծագի. եթե Խորենացին շփոթել է հեղինակների անունները, չէ՞ր կարող արդյոք շփոթած լինել ոչ թե միայն հիշյալ տեղեկության, այլ իր նշած գրվածքի հեղինակին: Գուցե և կարող էր, սակայն թյուրիմացությունն առավել հավանական է մեկ, ոչ էական տվյալի առիթով, քան մի ամբողջ աղբյուրի: Բացի այդ, ինչպես նշվեց, այդ մեկը մյուսներից առանձնանում է և, մեր տպավորությանը, ուրիշ ծագում ունի:

8. Վկայություն կա այն մասին, թե Պետրոսի եպիսկոպոսությունից 50 տարի առաջ, Դեկիոսի հալածանքների ժամանակ, երբ Ալեքսանդրիայի Դիոնիսիոս պատրիարքը (247–264 թթ.) ապաստան էր գտել Լիբիայում, նրա ուղեկիցների մեջ կար «Պետրոս» անունով մեկը: Կարծիք է եղել, որ այդ ուղեկիցն ապագա եպիսկոպոսն էր³³: Պետրոսի կենսագրությունը, մինչև 300 թ., գրեթե անհայտ է, չկան թվական տվյալներ, և դժվար է որոշել նրա տարիքը: Ուստի չի բացառվում, որ նա, հավանաբար պատանի հա-

32 Տե՛ս Lactantius. Op. cit., p. XXX:

33 Dictionary of Christian Biography, v. IV, London, 1887, s. v. "Petrus of Alexandria" (W. Bright), p. 331:

սակում, իրոք ուղեկցել է Դիոնիսիոսին: Եթե այդպես է, ուրեմն 268 թ. առաջ Պետրոսն արդեն պետք է որ եկեղեցականների շրջանում աչքի ընկած երիտասարդ դործիչ լիներ: Որ նա, դեռ մինչև եպիսկոպոս դառնալը կարկառուն դեմք էր, երևում է V դարի քրիստոնյա պատմագիր Փիլիպպոս Սիդեացու մի տեղեկությունից. Պետրոսը ղեկավարել է Ալեքսանդրիայի նշանավոր «Կատեխետիկ» դպրոցը³⁴: Ուշադրության արժանի են նաև Հետեյալ փաստերը. Փիրմիլիանոսը բարեկամական հարաբերություններ է ունեցել Դիոնիսիոսի հետ³⁵: Պետրոսը բազում վեճերի առարկա դարձած «հերետիկոսների մկրտության» հարցում եղել է Կիպրիանոսի (հետևաբար՝ նաև Փիրմիլիանոսի) հետևորդ³⁶: Փիրմիլիանոսի պահպանված միակ դրվածքը՝ Կիպրիանոսին ուղղված նամակը, հենց այդ հարցին է նվիրված:

Այս ամենը թույլ է տալիս, իբրև լրացում, մեկ այլ հնարավոր հետևություն էլ հանդել. Կեսարիայի եպիսկոպոսի մի երկում խորենացին հանդիպել է Պետրոսի անվանը, իսկ ուրիշ աղբյուրից (Լակտանտիոսից) իմացել, որ նա Ալեքսանդրիայի 16-րդ եպիսկոպոսն էր, և Փիրմիլիանոսին սխալմամբ համարել նաև այդ տվյալի հեղինակ:

* * *

Մեղ մնում է պարզել հետևյալը. խնդրո առարկա աղբյուրից Մովսես խորենացին ի՞նչ տեղեկություններ է վերցրել, որոնք կարող են հավաստի լինել ու արժեքավոր՝ Հայոց սլատմությունն ուսումնասիրության համար:

Քրիստոնյաների հալածանքներ անշուշտ եղել են նաև Հայաստանում, և տրամաբանական է, որ դրանք սաստկանային «խոսրովի» օրոք (216–258 թթ.), Հռոմեական կայսրությունում ծավալվող համապատասխան իրադարձություններին ղուղղված: Խորենացու արժանահավատ վկայությունը դրա հաստատումն է:

216 թ. Անտոնինոս Կարակալա կայսրն Ասորիքից սիրալիր նամակով Հայաստանի խոսրով I թագավորին հրավիրել է իր մոտ ու ձերբակալել: Հայերն ըմբոստացել են, նրանց դեմ է ուղարկվել թեոկրիտոս զորավարը, որը պարտություն է կրել³⁷: Հիմք ընդունելով Դիոն Կասիոսի այս տեղեկությունները, Գ. Խալաթյանը գրում է, որ խորենացու հաղորդումը հիշյալ իրադարձությունների ժամանակ հայ թագավորի չեզոքության մասին չի կարող ստույգ լինել, քանի որ «չի համապատասխանում իրականությունը»³⁸: Անհրաժեշտ է, սակայն, ճշտել. պատմիչի տվյալը վերաբերում է ոչ

34 Նույն տեղում:

35 *Sb'u Realencyclopadie der klassischen Altertumswissenschaft*, edd. A. Pauly, G. Wissowa, W. Kroll, 1893 ff., Bd VI₂ (Stuttgart, 1909), s.v. "Firmilianus" (A. Julicher), col. 2379–2380:

36 *Dictionary of Christian Biography*, p. 333:

37 *Sb'u Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն*. Քննական տեսություն հայ ժողովրդի սլատմության. — Երկեր, Հ. Բ, Երևան, 1978, էջ 64–65:

38 Գ. Х а л а т я н ц, Указ. соч., с. 127–128.

թե այդ դեպքերին, այլ 217 թ. գարնանը, երբ Կարակալլան, Եդեսիայում ձմեռելուց հետո, շարժվում էր դեպի Խառան քաղաքը և ապրիլի 8-ին սպանվեց ճանապարհին: Խոսրով I-ը ձերբակալված էր, Հայաստանում դահակալել էր Տրդատ II-ը, և շատ հնարավոր է, որ նախորդող ծանր իրադարձություններից հետո նոր թագավորը, ցնցումներից խուսափելու համար, առժամանակ չեզոք, հավասարակշիռ քաղաքականություն վարեր: Կարևոր է, թե Խորենացին, ելնելով այդ ժամանակաշրջանի պատմության մասին իր պատկերացումներից, ինչպես է կոչում հայ թագավորին, և թե ով էր իրականում Հայաստանի գահակալը: Կարևորը հայերի չեզոքության փաստն է, որ եղել է ղիտարկվող աղբյուրում: Այդ տեղեկության հավաստիությանը չի կասկածում նույնիսկ Խորենացու խիստ քննադատ Կ. Թուլմանովը³⁹:

Արժանահավատ պետք է համարել նաև հաջորդ տեղեկությունը. 256 թ. Վալերիանոս կայսրն արշավել էր արևելք⁴⁰: Հավանական է, որ հայ նախարարներն իրենց թագավորի սպանությունից հետո ստիպված լինեին գիմել նրա օգնությանը՝ ընդդեմ Հռոմեական կայսրության թշնամի Պարսկաստանի: Դա Շապուհ I-ի (241–272 թթ.) ժամանակաշրջանն էր: Նա Հայաստանի դեմ խիստ ռազմատենչ քաղաքականություն էր վարում: Սասանյանների իշխանության հաստատումից հետո (226 թ.) հայերն առհասարակ հարկադրված էին ապավինել Հռոմի «հովանավորությանը»⁴¹: Վերջապես հայտնի է, որ Վալերիանոսի օրոք կայսրության հյուսիսային սահմանը (Դանուբ գետի մերձակայքը) ենթարկվում էր գոթերի հարձակումներին, ինչպես որ ստույգ վկայում է Մովսես Խորենացին:

Ինչ վերաբերում է Հռոմում եղած ժամանակ Տրդատի առասպելական քաջագործություններին, Օլիմպիական խաղերում նրա տարած հաղթանակներին, ապա դրանք անշուշտ որոշ իրական հիմք ունեն: Նմանատիպ տեղեկություններ են պահպանվել նաև Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» մեջ (42–45, 202):

* * *

Մեր որոշ դատողություններ (հատկապես 7-րդ և 8-րդ կետերում), թեկուզև հնարավորին չափով փաստարկված, բայց, վերջին հաշվով, ենթադրություններ են և կարող են առարկությունների տեղիք տալ: Սակայն չպետք է մոռանալ, որ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ամեն մի ուսումնասիրող առնչվում է այնպիսի բարդ խնդիրների հետ, որոնք, որևէ մոտեցմամբ վերլուծելիս կամ մեկնաբանելիս, հնարավոր է կատարե-

39 C. T o u m a n o f f. The Third-Century Armenian Arsacids. A Chronological and Genealogical Commentary.– Revue des Etudes Arméniennes, 1969, N 6, p. 247–248:

40 Տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 196:

41 Հմմտ. ՀԺՊ, հ. I, Երևան, 1971, էջ 794–795:

լապես համոզիչ, վերջնական եզրահանգումների գալ: Փիրմիլիանոսն իբրև հայ պատմիչի աղբյուր, թե՛ բանասիրական, թե՛ պատմագիտական տեսանկյուններից, այդ բարդ խնդիրներից մեկն է: Եվ դժվար չէ համոզվել, որ, ներկայացվող բոլոր կռվաններով հանդերձ, նույնպիսի մի ենթադրութուն է գերիշխող այն կարծիքը, թե իտրենացին, հակառակ իր ուղղակի հաղորդման, ոչինչ չի քաղել Կեսարիայի եպիսկոպոսի որևէ գրվածքից:

“ПОВЕСТВОВАНИЕ” ФИРМИЛИАНА КАК ИСТОЧНИК МОВСЕСА ХОРЕНАЦИ

А. С. ТОПЧЯН

Резюме

В 75-й главе второй книги “Истории Армении” Мовсес Хоренаци упоминает “повествование” известного церковного деятеля III в. н. э., епископа Каппадокийской Кесарии Фирмилиана в качестве своего источника для нескольких последующих глав. Загадочность этого упоминания и содержащиеся в нем анахронизмы дали повод ряду ученых прийти к выводу о том, что под рукою Хоренаци не было никакого сочинения Фирмилиана, и что это имя ему знакомо только благодаря Евсевию Кесарийскому. На основании некоторых данных и нового толкования запутанных слов Хоренаци, делается попытка показать, что историограф действительно пользовался упомянутым им “повествованием” Фирмилиана. Именно из этого источника он почерпнул несколько важных исторических сведений.